ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ
Շուշան Դոդոյանին
/foi@foi.am/

ՀՀ գլխավոր դատախազություն ստացված Ձեր 2022թ. փետրվարի 22-ի հարցման կապակցությամբ տեղեկացնում ենք, որ դրանով հայցվող տեղեկատվության, ընդհանրապես հանցագործությունների առանձին տեսակներով, դեպքերով և դրանց քրեական շարժընթացի վերաբերյալ վիճակագրական տվյալների առանձին հաշվառում ՀՀ գլխավոր դատախազությունում չի վարվում:

Դատախազությունում վիճակագրություն վարվում է դատախազական գործառույթների կտրվածքով:

Կոնկրետ ոլորտներում արձանագրված հանցագործությունների ծնող պայման-պատճառների վերհանման, դրանց նախականխման և կանխման, ինչպես նաև հանցագործությունների դեմ պայքարի գործուն միջոցներ ձեռնարկելու և միասնական քրեական քաղաքականություն մշակելու նպատակով ՀՀ դատախազությունում ոլորտային ընթացիկ ուսումնասիրություններ և ամփոփումներ կատարվում են ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով կամ ցուցումներով, ինչպես նաև «Դատախազության կիսամյակային աշխատանքի ծրագրերով» նախատեսված դեպքերում, որոնց համար անհրաժեշտության դեպքում հիմք են հանդիսանում ՀՀ ոստիկանությունից և քննչական մարմիններից ստացվող վիճակագրական և այլ տվյալները: Վերոնշյալ նպատակներով հավաքագրված և մշակված տեղեկատվության առկայության դեպքում միայն դրանք տրամադրվում են տվյալ պահին ստացված հարցումներին ի պատասխան կամ հրապարակվում են ՀՀ դատախազության կողմից պաշտոնական հաղորդագրությունների տեսքով:

Այս համատեքստում ՀՀ գլխավոր դատախազությունում Ձեր հարցման մեջ նշված տվյալների չափանիշներով՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով ձևավորված, մշակված ամբողջական տեղեկատվություն առկա չէ:

Այդուհանդերձ, տեղեկացնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով հարուցված քրեական գործերի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազություն որոշակի պահին առկա՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցած մշակված տեղեկատվությունը

հրապարակվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ (https://www.prosecutor.am/am/mn/8445/):

Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածով քրեական շարժընթացի կապակցությամբ վերջին շրջանում ուսումնասիրություններ չեն իրականացվել, այդ նպատակով վիճակագրական տվյալներ իրավասու մարմիններից չեն հավաքագրվել, հետևաբար հայցվող տեղեկատվությունն այս մասով հնարավոր չէ տրամադրել:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ հարուցված քրեական գործերի, նախաքննական մարմինների կողմից առաջադրված մեղադրանքների, քրեական գործերի շարժընթացի վերաբերյալ համապատասխան վիճակագրական քարտերը հաշվառվում են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում, հետևաբար ակնկալվող տեղեկատվության տնօրինող կարող է հանդիսանալ ՀՀ ոստիկանությունը:

Հարգանքով՝

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների
գործերով վարչության պետ՝

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 3/2/2022 15:20:19 GMT+4

Signed by: HARUTYUNYAN ARTAK 3707800132

Ա.Հարությունյան